ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2014 թվականի N 307-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1] և 77[2] հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 159-Ա հրամանը և 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 01/15/3693-14 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել 2014 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Գառնի համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ Գառնի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 18
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2014 թվականի հուլիսի 18-ի N 307-Ա որոշման

2014 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանում	Ժամանակահատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1	2	3	4	5	6
1	գ. Գառնի	հուլիս 2012թ. - հուլիս 2014թ.	1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառ 2. Արտակարգ իրավիճակների բնագավառ 3. Առևտրի և ծառայությունների բնագավառ 4. Բնապահպանության բնագավառ 5. Ընդերքօգտագործման բնագավառ 6. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 7. Հողօգտագործման բնագավառ 8. Կրթության բնագավառ 9. Մշակույթի բնագավառ 10. Պաշտպանության բնագավառ 11. Սոցիալական պաշտպանության բնագավառ 12. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 13. Տրանսպորտի և կապի բնագավառ 14. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 15. Առողջապահության բնագավառ 16. Քաղաքաշինության բնագավառ 17. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	ղեկավար՝ ՀՀ Կոտայքի մարզպետի Խորհրդական անդամներ՝ 1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ 2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ 3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ 4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ 5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ 6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ 7. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ	Պապոյան Կարեն Սարոյան Գարիկ Թովմասյան Վաչագան Բաղդասարյան Սեդա Վիրաբյան Արամ Արտաշյան Շավարշ Ավետիսյան Եղիշե Բաբախանյան Էդիկ